Հասցեատեր՝
«Արարատի Արաքս ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ araratiaraqs@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.04.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նազելի Արսենյան
	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝ Ա-079

Խախտում՝
1. Խաղն ուշացումով սկսելը (Հավելված 1 Խ, 24-րդ կետ)
2. «Արարատի Արաքս» թիմի գլխավոր մարզիչ Ռուբեն Գարեգինյանի (38326) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ անհամաձայնություն դրսևորելը (Հավելված 1 Խ, 21-րդ կետ)
3. Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը (Հավելված 1 Խ, 14-րդ կետ)

Առաջնություն՝ ՍՖԱ Ա լիգա 2024/25

Խաղ՝ «Արարատի Արաքս» - «Էջմիածին ՍԱ», 20.04.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և 21-րդ հոդվածի 3-րդ կետը՝ համակցել սույն վարույթի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նկարագրված խախտումների պատասխանատվության միջոցները և «Արարատի Արաքս ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

«Արարատի Արաքս» թիմի գլխավոր մարզիչ Ռուբեն Գարեգինյանին (38326) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի ապրիլի 20-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Արարատի Արաքս» թիմի գլխավոր մարզիչ Ռուբեն

Գարեգինյանի (38326) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: